

առաւ ուսուցչութենէ, արեւելեան լե-
զուաց ուսումնարան հաստատեց Բեդր-
պուրկի համալսարանին մէջ. հուսկ ու-
րեմն 1856 տարւոյն՝ նոր սկզբանց վրայ
հիմնելով հասարակաց կրթութիւնը՝
ուզըակի իր հսկողութեանը ներքե ա-
ռաւ: Այլ որ քան զամենայն կը պա-
տուէ իր մտաց ազնուականութիւնն ու
կամաց ոյժը, դերեաց ազատութիւնն
եղաւ, զոր յաջողեցուց յազթանակե-
լով ամեն դժուարութեանց. այս գործը
քաղաքականութեան յիշատակազրու-
թեանց մէջ պիտի անմահացընէ իր ա-
նունը. որովհետեւ հաւասարութեան ըս-
կըզբունքը ինքն եղաւ մտցընող Ռու-
սիոյ մէջ: Իսկ իր արտաքին քաղաքա-
գիտութեանը գալով, մասնաւոր բարե-
կամութեամբ միացած կ'երեւայ Նարո-
ւէն Գ. կայսեր հետ. ինչպէս որ միշտ
և մասնաւորապէս իր թագազրութեան
հանդէսներուն միջոցն (7 սեպտեմբեր
1856) և Շղուզկարտի տեսութեամբն
(սեպտ. 1857) ցրցուց: Այսօրուան օրս
զբաղած է լեհաստանի խռովութիւնն
ընկճելու:

Նոր առաջարկութիւն մը.

Միջերկրական և Ռվկիանոս ծովերը
իրարու հետ միացընելու համար՝ ջը-
րանցք մը բանալու նոր առաջարկու-
թիւն մը կը լսուի, որ Զրանցք Նարո-
ւէնի պիտի կոչուի: Քրուաց անունով
անձ մը մտածեր է այս խորհուրդը: Մի-
ջերկրական ծովը Ռվկիանոսի հետ պի-
տի հաղորդէ այս ջրանցքը և Մարսիլիան
Տէօնքէրքի հետ՝ անցնելով Ռան, Սէն,
և այլն, ձորերուն մէջէն: Այս Նարո-
ւէնի ջրանցքը պիտի ըլլայ կերպով մը
իրև շարունակութիւն Սիւէզի ջրանց-
քին՝ Գաղղիոյ երկրին մէջէն անցնելով,
և իրև աւելի կարճ ճամբայ մը դէպ ՚ի
հիւսիսային կողմի ծովերը՝ երթալու:

Տասն մը տնտեսութեան վրայ հար-
կաւոր գիտելիք.

Եւրոպայի մէջ շատ տեղ սովորու-
թիւն է տախտակամած ընել խուցե-
րուն յատակը ազնիւ ընկուզի կամ ուրիշ
պինդ տախտակով, մանր կտորուանք-
ներէ, զորոնք այլևայլ ձևերով յար-
մարցուցած՝ մաքուր կը փայլեցընեն:
Այս տեսակ տախտակամածը թէ ա-
ռողջութեան կ'օգնէ և թէ մաքրու-
թեան: Առողջութեան կ'օգնէ՝ տախ-
տակ սրբելու պէտք չունենալով. որով-
հետեւ տախտակ սրբելը թէ սրբողնե-
րուն ֆլուսակար է, և թէ տանը բնա-
կիչներուն՝ տանը մէջ խոնաւութիւն
պատճառելով: Մաքրութեան ալ կ'օգ-
նէ՝ փոշիները դիւրաւ մաքրուելով: Արդ
թէ որ ուզէ մէկը փայլուն տախտակա-
մած ընել իր տանը խուցերն ու սրահ-
ները, ահա այս է փայլեցընելու կերպը:
Մէկ ռիսա ջրոյն մէջ 60 արէմ փոթաս
խառնէ և կէս ռիսայ ալ դեղին մեղրա-
մամ, ու կակուղ կրակի վրայ դիր որ
հալի մեղրամամը. այս խառնուրդը եր-
բոր պաղի՝ թէ որ խիստ թանձր ըլլայ,
վրան այնչափ ջուր աւելցու՝ ինչուան որ
դիւրաւ տարածելի ըլլայ. այն ատենը
մէկ մեծ վրձինով մը տախտակամածին
վրայ քսէ ըստ կարի բարակ և հաւա-
սար տարածելով, ու քիչ մը թող՝ որ
աղէկ մը ցամբի. և ետքը կտորուանք
բրդէ լաթէ կծիք մը ըրած ու աւելի
կոթի մը ծայրը անցուցած՝ անով շփէ
ինչուան որ փայլի:

Բայց այսպէս փայլեցուցած տախտա-
կամածին փայլունութիւնը երբոր պակ-
սի, այն ատենը պարզ դեղին մեղրա-
մամի կտոր մը երկայն փայտի մը ծայրը
հաստատած տախտակամածին վրայ
քսելէն ետև՝ շփելով կը նորոգեն փայ-
լունութիւնը:

